## Ս. Պ. ԲՈՒՐԳԻՑ

Ս. Պ. Բուրգից կանանց հայրենասիրական Կայսերական Ընկերութեան Դիւանը խնդրում է մեզ յայտնել, որ յիշեալ ընկերութիւնը հրատարակել է և շուտով ի վաճառ կը հանուի նոր ձևի պոստային նամակադրոշմներ: Այդ նամակադրոշմները լինելու են գործածականից մեծ, իսկ վրան գեղարուեստօրէն տպուած է լինելու՝ արտասահմանի նամակադրոշմների վերայ՝ Մոսկուայի միջնաբերդը, այլ քաղաքների նամակադրոշմների վերայ՝ Ս. Պ. Բուրգի Մեծն Պետրոսի արձանը. իսկ տեղայինների վերայ՝ Մինին և Պաժարսկի պատմական հերոսների արձանները, բաց քարտերի նամակադրոշմների վերայ տպագրուած կլինի ծովապետ Նախիմովի արձանը Սևաստօպօլում: Դոքա կվաճառուին սահմանուած գնից երեք կոպէկ աւելի. իսկ գոյացած գումարը գործ կը դրուի յօգուտ գործադիր զօրքի զինուորների որբերի:

Նամակադրոշմները հրատարակուած են որոշ թուով, որոնց սպառուելուց յետոյ այլ ևս չեն տպուելու. Կծախուին թէ Պետերբուրգում յիշեալ ընկերութեան նախագահի՝ Ֆրիդրիխ Բորխովիչ Բերնշտէյնի մօտ (С. П. Б. Адмиралтейскiи Каналъ 23) և թէ մայրաքաղաքների պոստային գրասենեակներում և նահանգական մի քանի մեծ քաղաքներում:

## ՆՈՒԷՐՆԵՐ

Մեծ. պ. Արշակ Ս. Բաբեանը մի օրինակ «Լումայ» նուիրում է 1905 թուին Թիֆլիսի Հայոց կուսանաց մենաստանին: